զիս։ Եւ դարձեալ ձայնեաց մունետիկն թէ Կարմիր ըստակ չանցնի և պակաս զուռուշ, և զուռուշն՝ Զ ըստակ։ Եւ դարձեալ զյէնկիչէրու օտապաշիքն և զչօրպաճիքն փոփոխեցին։ Եւ դարձեալ օրս զՂարա Աբտուլաի պիղծ սևացեալ ոսկերքն վերուցին ազգն իւր և յէտիզուլան զԽալիճէի օղլուն այլ վերուցին հրամանաւ զայմախամին, որ կայր անդ ի վերայ քարի միոյ հոտեալ և նեխեալ, զի էր պոռնիկ յոյժ և անյագ չնացող։ Եւ երեկոյիս եւ յամենայն աւուր նոր աղան շուրջ կու գայր. և երեկոյիս շատ մարդ գանեաց, բայց ինքն անմեղ էր, այլ անիծեալ զափուքեհեասիքն ըմբռնեալ բերէին, և ի ժամանակ ծեծելոյն, որ ասէր աղան թէ Թողէ՛ք, իւրեանքն մէկ քանի յաւել կու զարնէին զբիրն. այս էր գործ նոցա ի սկզբանէ։

Եւ ի գիշերիս յայսմ որ Զշի (29 Փեբր.) լուսանայր, գտան զՊիլալ աղա ներքինի սեաւ հօճա թաքաւորին ի Ղուզղունճուխն՝ ի տուն իմամի միոյ եւ խեղդամահ արարեալ բերին կախեցին յոտացն ի նոյն ծառն, որ իբրև զմի գոմէշ[2]) էր, և ի ձեռն մի սեաւ ըստ գունոյ նորին մուկ մի ի պոչէն ի ձեռն պատատեալ կապեցին, և այսպիսի խայտառակօրէն կային աւուրքս և բազում ամբոխ գային ի տես և երթային։ Այս եղև յԳ ժամու աւուրս։ Եւ դարձեալ պահու ինչ ըմբռնեալ զՇապան ղալֆան՝ Մուլքիին այր՝ ի մէջ նաւի միոյ մտեալ ի մէջ ամպարին. և բերեալ զնա ի զայմախամն և նա բազում հարց և փորձ արարեալ և յետ բանիցս խնդրեալ ի զայմախամէն և ասացեալ թէ Ահա՛ ի ձեռս ձեր եմ, և զիս գիտակ եմ որ կու սպանէք. յառաջ զկինն իմ վայր առէք ի կախաղանէն, զի պակասաւոր է և է բաւական որ այսքան օրս անդ կա-

1) գոմոշ.